թագաւորն եւ ձախմէ գչխոյն Հեղինէ որ-
375 զովքն : Եւ ասին թէ ասա եղեւ ժողովն. եւ
այս էր սեղանատեղն Յոհանու Ոսկիբերա-
նին. իսկ այժմ աթոռ է եւ պատրիարգարան
Հայոց :

ԱՎՐԱԹ ՊԱՁԱՐ

Եւ ի գնալն հանդիպեցաք յԱվրաթ պա-
380 զարն : Տեսաք անդ տիքմատաչ մի յոյժ
բարձր. զի գլուխն հազիւ երեւէր, զոր զա-
նազան պատկերք եւ ձիք եւ բանք կոփած
էին ի նմա, հիանալի տեսողաց : Կային եւ
այլ տիքմատաչք, բայց սորա նման բարձր
385 չէին :

ԹԱՎՈՒԽ ԽԱՆ

Եւ անտի յոլով գնացեալ եկաք ի Թա-
վուխ խանն. եւ անդ եւս կայր սիւն մի այլ
մէրմէրէ, բայց չէր նման Ավրաթ պազարին.
եւ էր պատեալ շուրջանակի յոլով տեղիս
390 պողովատով՝ վասն ամրութեան : Եւ ասին թէ
ի ներքոյ այսմ սեանս է եօթն գամպեղն որ
Քրիստոսի օրհնութենէն յաւելաւ հացիւ եւ
ձկամբ : Կային ասա եւ անդ բազում եւ ան-
թիւ եկեղեցիք մեծամեծք, վիմաշէն եւ մար-
395 մարիոնեայ, եւ մատուռք. յորս կային
նշխարք եւ ոսկերք սրբոց. եւ որք գեղեց-
կազոյնք եւ ի բարձր տեղոջ էին, զայն ա-
նօրէնք խլեալ եւ յափշտակեալ էին. եւ զիւ-

377 պատրիարգարան: — 390 պողովատով | ասի: